


ՏԷՐ ԵՒ ՏԵՈՐԷՆ  
 Ե. ԹՈՐՈՏՅԱՆ  
 Նամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտքէ ուղղել առ  
 Տեօրին. ԱՐՇԱՒՈՅՍ քաղաքի  
 ԳԱԶԻԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԷՊՏՈՍԻ ՀԱՍՏԱՐ	
Տարեկան ողջ դանկին.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN  
 Direc.-propr. du journal arménien  
 ARCHALOUYCE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ


ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խնդրարեւանս վրայ է :

Խոլքազուրեքեան ուղղաւած  
 գրութիւնք է՛ն չ'են տրուիր

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ  
 Կանխիկ վճարելի են

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ  
 ԵՒ ԲԱԶՄԱՎԷՊ

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ)



Հիմա կը հասնիմ նորագոյն տամա-  
 նակներու, այսինքն մեզ համար է՛ն շա-  
 հեկան կէտերուն. «խաղաղասէր հայու-  
 թիւնը վերջերս ստիպուեցաւ անընդհատ  
 խուժել, գաղթել արտասահմանի զանազան  
 կողմերը. թողլով իր դարաւոր հայրենիքը,  
 օտարութեան մէջ ուղեց գտնել իր բարիքը  
 և հոն ուր բարիք գտաւ, այն իր հայրե-  
 նիքն եղաւ. Ubi bene, ibi Patria!» և  
 երկարօրէն ու խնամոտօրէն կուսումնասիր-  
 ուի արտասահմանի գաղութներուն ներկայ  
 վիճակը, Ամերիկա, Պուլկարիա և Եգիպտոս :

Պուլկարիոյ գաղութն է միայն որ իր  
 ներկայ բազմակերպութեամբ կ'արժանանայ  
 հայր երեւեանի գնահատութեան. իսկ Ամե-  
 րիկայի ու Եգիպտոսի գաղութները մռայլ  
 ապացոյցով մը կը ներկայանան իրեն. լոկ  
 բարի նախանձով չ'է որ կը փորձուիմ պաշտ-  
 պահել մեզի, այլ ճշմարտութիւնը ըսել  
 կուտայ ինձի բաներ, որոնք ապահովա-  
 բար վրիպած ըլլալու են յօդուածագրին,  
 շատ անգամ լաւատես աչքերէն :

Սա տողերը կը ձօնէ մեզի, «Եգիպ-  
 տոսի և Ամերիկայի հայ գաղութը այնքան  
 վրէժխնդիր չ'ըլլալով իր ազգին կրօնքին  
 ու դպրութեան, զգալի կերպով կը նուազի  
 հայ տարրը և կը ձուլուի օտարին մէջ :»  
 Ձգելով որ Ամերիկահայերը պաշտպանեն  
 ինքզինքնին այս թերեւս անիրաւ գնահա-  
 տումին առջև, վաճառի ինձի կուգայ որ,  
 ինչպէս հոս, հոն ալ հայ տարրի նուազում  
 չ'կայ, և եթէ յարգելի յօդուածագիրը  
 բողբազան հայերու կ'ակնարկէ, օտարին  
 մէջ ձուլում ըսելով, կարծեմ կը սխալի,  
 քանի որ, բողբազան հայերու ազգային  
 ամեն կարգի ձեռնարկներու և ջանքերու  
 անվերապահ մասնակցութիւնը յայտնի ճըշ-  
 մարտութիւն մ'է. իսկ շատ ցանցաւ խառն  
 ամուսնութիւնները, ցեղին սկարայման ու  
 նուազումին միակ պատճառ չ'են կրնար ըլ-  
 լալ :

ու պահպանել իրենց սեփական լեզուն ու  
 բարբերը. իսկ հարուստները կամ «լոկ» երը  
 (ինչպէս յօդուածագիրը կը շեշտէ իրապէս  
 անպէտ ու անհարապատ «լոկ» քերու ակնար-  
 կելով) կրնայ ըլլալ որ իրենց ետին չը  
 տեսնալով կենսունակ կամ պատուաբեր  
 հասարակութիւն մը, անզգալի կերպով  
 օտարին հակած ու հոն փնտռած ըլլան  
 իրենց մտքին սնունդը, այլապէս ըսելով  
 իրենց հաւասարը : Սակայն այսօր այդ պայ-  
 մանները փոխուած են, շնորհիւ գոթազգ  
 պատահարներու. հայ տարրը գոյութիւն  
 ունի Եգիպտոսի մէջ, զանազան գասակար-  
 գեր զիրար կամրայջացնեն և կը ջանան  
 միասնապէս բարձրացուի մը - ապացոյց՝ այն  
 փութկոտութիւնը որով մեծէն փոքրը կը  
 փափաքի օգտակար ըլլալ իրեններուն,  
 Եգիպտոսները, գարոյնները (թէեւ տարբա-  
 կան) թերթեր (առ այժմ երկու) և ասանց  
 շուրջը գարձող վիճերը ու կոիւնները (ինչու  
 չէ) թէեւ ո՛չ այնքան աղմկալից որքան ի  
 Պուլկարիա կամ այլուր, բաւականաչափ կը  
 հաստատեն թէ հայ տարրը հոս, ո՛չ միայն  
 ձուլուելու հակումէս չ'է, այլ կարող եղած  
 է իրեն արժանի տեղ մը գրաւելու այս  
 բազմատարր երկրին մէջ : Դիտելի է որ,  
 Եգիպտոսը Պուլկարիայէն կամ Ամերիկայէն  
 անհամեմատ անգոյն երկիր մ'է, ոչ որոշ  
 քաղաքակրթութիւն ունի, ո՛չ ալ որոշ  
 ճնշող ու իշխող ուժ. տեղացիք մեծամաս-  
 նութեամբ մահմետական, իրենց զէռօյնի  
 հաւասարող զարդացումով անբանը իսկ չեն  
 կրնար ձուլել իրենց մէջ. իսկ Եւրոպական  
 գաղթականութիւնները, զիրար հակասող  
 քաղաքակրթական աստիճաններուն նախով,  
 մեզի ունէ վտանգ չ'են սպառնար : Այս  
 բոլորին ի տես ուրեմն, հայր երեւեան  
 կրնայ հանգիստ սրտով ըսել, «հոն ուր  
 չ'իկայ քաղաքական և զրախան կաշկանդում  
 ճնշում, հոն ուր չ'կան կրօնական երկպա-  
 ոսկիութիւնք, մանաւանդ յայտնի և գաղանի  
 դաւանափոխութեան հասանք մը,

— Հոն գաղթելով . . .  
 . . . եթէ չը յիշենք թէ օտարին վար-  
 գըն է . . .  
 Բայց կրնանք ձայնակցել իրեն, զլուխ  
 ծռելով ճակատագրին «հայր կեանք կ'առ-  
 նու, կը զարդանայ նիւթապէս և բարոյա-  
 պէս, եթէ բազրը զինքը ամփոփէ կրօնա-  
 կան և քաղաքական կաշկանդումէ զերծ  
 համեստ տեղութեան մը մէջ. հոն իր հայ-  
 կական տաճարը և մամուլը կը մխիթարեն  
 կը կազդուրեն զինքը և մտայնել չեն տար  
 հայրենեաց ամենէն քաղցր յիշատակները :

Խոր վիրապը, նուիրական Սարը, Շաւար-  
 շանի Վարդերը, և զիւցազներդու Պաւլու-  
 լը : »

Այս տողերով չեմ ուզեր հետեցնել  
 թէ անթերի հրեշտակներ ենք. կ'ընդու-  
 նիմ թէ պակասութիւններ ունինք, ու շատ  
 խոշոր, բայց ատոնք ուրիշ բաներէ առաջ  
 չ'են գար, եթէ ո՛չ այնու թէ,

«Հայերը ամեն տեղ հայ են» :

Այսինքն ցեղային տկարութիւնները ու  
 պակասները մենք ալ ունինք աւելի կամ  
 նուազ չափով. էն առաջ, անհասակաւ ու  
 հաւաքակալ գիտայցութիւնն է որ մեզի կը  
 պակսի. ամեն ոք կը կարծէ ամբողջութիւն  
 մը, կատարեալ մը եղած ըլլալ, մինչ  
 հիւլէ մը չ'է. եթէ զարգացած ու հարուստ  
 գասը մտածէր թէ իր կամքը անպատճառ  
 ժողովրդին կամքը չը ներկայացնէր՝ օրէնք-  
 ները ոտնակոխ չ'էին ըլլար. եթէ հան-  
 ըութեան ստուար մասը խորհէր թէ մտքի  
 և դրամի առաւելութիւնը ունեցողները  
 անհրաժեշտ են ու է օգտակար աղօթքուտ  
 ձեռնարկ յաջողութեան համար, և այս  
 գիտակցութեամբ քիչ հայհոյէր ու քիչ  
 բամբասէր, արգիւնաւոր աշխատութիւններ  
 կ'ըլլային այսօր. և վերջապէս եթէ յաւի-  
 տենապէս զիրար հակասող տարրերը, աղ-  
 քան ու հարուստը, ազէտն ու գիտունը,  
 իրարու հետ վարուելու կերպերը գիտնային,  
 ի սէր այն ցեղին որուն կը պատկանին,  
 չ'էինք ըլլար հոն ուր որ ենք այսօր :  
 Բայց այս ամենը Եգիպտոս ալ գոյութիւն  
 պիտի ունենայ, ինչպէս Պուլկարիա կամ  
 Ամերիկա, քանի որ «Հայը հայ է ամէն  
 տեղ : »

Չակազիկ ԶԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՆԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐՈՒԿ  
 ՄԱԸ ՄԺԵՂՆԵՐՈՒՆ

Մեղները գիտնական ու բժշկական աշ-  
 խարհին մէջ շատ մը թշնամութիւններ յարու-  
 ցած են որոնք իրենց համար խիստ աղէտաբեր  
 պիտի ըլլան, Երկար ժամանակ իրենց բժիշկ-  
 ներու հետ ունեցած յարաբերութիւններ շատ  
 պարզ ու հասարակ ձև մը ունէին որուն համար  
 մեղները հանգիստ կ'ապրէին, բժիշկը միայն այդ  
 մեղներով կ'զբաղէր կատար մը անուշադր եւ կամ  
 փնտկան թթուաւ յանձնարարելու համար ա-  
 նոնց պատճառած կծկեցուցիչ խոչնդումներ  
 բուն դէմ, բայց քանի մը տարի է ի վեր,  
 իրերու վիճակը փոխուած է, բժիշկներուն բռնած  
 անտարբեր գիրքը հիմա թշնամականի փոխ-  
 ուած է :  
 Այս փոփոխութեան պատճառը malaria  
 արիւնամանրէին (hématozoaire) գիւտը եղաւ :

Կը կարծուէր թէ մտեղները կասկածելի յարարութիւններ կը մշակէին paludismeի հետ բայց բոլոր հին հեղինակաց այդ մասին ընտանեբը անտարբարութիւններ չէին : Այսօր փորձը կատարուած է եւ ալ տարակոյր ներելի չէ : Իտալացի գիտնականներուն շատ մը փորձերը հաստատեցին թէ paludismeի եւ մեր մէջ մըլ-տակայ միջնորդ մը կայ եւ այս միջնորդն ալ մտեղն է որուն ծծողը (trompe) մեր արեան մէջ կը մտնէ Լավտանի արեւմտեանը : Ասկէց զատ Ամերիկացիները կը հաւատեն թէ Լավտանայի մտեղներուն ալ խայթուածքը նուազ վտանգաւոր չէ, ատոնք իրենց խայթուածքով դեղին սեւեղին (fièvre jaune) ի միջոցն է որ մարդու արեան մէջ կը մտնեն :

Այս երկու ծանր ամբաստանութիւնները հիմա մտեղներուն կիսանքը վտանգի մէջ կը դնեն ամբողջ աշխարհիս մէջ . ընդհանուր շնչման պատկերացմէ որ իրենց դէմ կը մղուի, թշնամութիւնները շատոնց սկսած են գանապան կէտերու վրայ : Քուպայի ընդհանուր կառավարչը շարժման մէջ գրած է իր հրամանատարութեան տակ գանապան ամբողջ Ամերիկեան գործերը : Հրահանգներ զրկուած են ամբողջ զօրաբանակներու, պատուիրելով հետեւեալ երկու միջոցներուն խիստ գործադրութիւնը, որոնցմով մտեղներուն ծնելը ու բազմանալը բոլորովին պիտի սպիւրի եւ եղածներն ալ անմիջական կերպով պիտի ստահին : Առաջինը մասնաւոր վանդակները գործածութիւնն է որ կարգիւն թշնամիին մուտքը բանակաւորներու, շրջուն հիւանդանոցներու եւ հիւանդանոցներու մէջ, երկրորդ քարիւղով բոլոր լճացեալ ջուրերու մէջ գանապան մտեղի թրթուրներուն ջնջումը, որովհետեւ ճահիճներու մէջ է որ կը բազմանայ մտեղը : Ամիսը երկու անգամ, ունկի մը քարիւղը ասանդիինգ քառակուսի ոտք տարածութեամբ ջուրի համար բաւական է, այդ որոշեալ չափով քարիւղը բոլոր ճահիճներուն, լճակներուն, կայուն ջուրերուն վրայ թափուելով բոլոր այդ վնասակար միջոցները իրենց թրթուրներովը մէկտեղ կը ստակին :

Իտալիոյ մէջ կոբըր հաստատուելու յարատեւութեամբ կը շարունակուի, մէկ քանի քաղաքներ կիսթեմաթիքաբար իրենց պաշտպանութիւնը կազմակերպած են, անաւտոնիկ օրինակի համար Սասարիի (Սարաէնիա) մէջ Տր. Ֆէրուչիի գործադրած միջոցները մտեղներուն դէմ : Տօթթէտորիա եւ առաջ բոլոր քաղաքներ եւ շրջակայքին մէջ գանապան մտեղի « պատարաններուն » այսինքն ամէն ճահիճի ջրամբարի, լճակի, շրջիկ-ջի ցուցակը շինած է, սպա հրաման տուած է բոլոր այդ լճացեալ ջուրերուն վրայ ամիսը 2 անգամ մասնաւոր չափով քարիւղ թափել, ձուին մէջ խոկ կողովու համար մտեղին յոյսերը այսինքն մտեղները : Միեւնոյն ժամանակ բոլոր բնակարաններուն մէջ մշտական եւ ընդհանուր ջարդ մը կը տրուէր մտեղներուն ամէնալաւագոյն մտեղապան (culeicide) դեղերով որոնք շինուած են իգափողի (pyrethre) արեւածաղկի (chrysanthème) մրուանի (valériane) եւ լինի խառնուրդով : Պատերազմը ծաղկէն հաղիւ տարի մը ետքը Սասարի քաղաքը իր ամբողջ թշնամիներէն ազատած էր : Տր. Ֆէրուչի իր միջոցը անխուսափելի կը նկատէ, մտեղները չեն կրնար այդ régime ին ստիպել : Այդ բոլոր կոբըրներուն ծախքին համար ալ հարկ չկայ թաղապետական փոխառութիւն մը կ'ընելու, Տր. Ֆէրուչի կըսէ թէ 50000 բնակչով քաղաքի մը համար հաղիւ 1200-1500 ֆրանքի մօտ ծախք մը կ'ըլլայ :

Ասիական կը բացատրէ Բարիդի մէջ ալ մտեղներուն դէմ պատերազմ ծագելուն պատճառը : Բրօքէսէն Տրպով բժշկական տեղեկագրի մէջ հետեւեալը խօսած է իրեն գաղտնաբար կը ունենալով Պ. Պ. Բրու եւ Լավրան . « իրաւ է թէ մենք բարիդի մէջ չունինք ոչ oenophales claviger եւ ոչ ալ Լավրանայի culex fasciatus, մեր ունեցածը մեր համեստ մտեղնէ (culex pepieas) որ աւելի գոգոնիլ եւ ձանձրացուցիչ է քան թէ վնասակար : Բայց եթէ մեր մտեղին խայթողը ոչ ճահիճին դնողը եւ ոչ ալ դեղին սեւեղը չթափէր, կրնանք վստահ ըլլալ թէ ուրիշ միջոցակաւ շարագործութիւններ չկատարել : աստիկայի մէջ լինելու միջոց գանապանը

չնկնիք . ոչ որ չցաւիր անոնց վրայ :

Պ. Տրպովի յանձնարարած միջոցը միեւնոյնն է Իտալացի բժիշկներուն առաջարկածին : Լճացեալ ջուրի ճահիճներ չեն պակասիր մեր սքուէրներուն, պարտէզներուն հասնողներուն մէջ, ատոնք ամէնն ալ մտեղի բոյներ են, եթէ կողմէք գանապան բնակչին ընել կատար մը քարիւղ թափեցէք այդ ջուրերուն վրայ եւ մտեղները կը գաղթին ապրիլէ :

Արգարեալ մտեղները խիստ հակակրօթիւն ունին քարիւղէն, ձամայիգաթի մէջ անոնց խայթուածքէն ապահովուելու համար բնիկները անկողնոյն վրայ, քնացողին գլխուն վերեւը քարիւղով թրջած լաթ մը կը կախեն :

Պ. Հէրիգուր կըսէ թէ մտեղներուն խայթուածքին չ'ենթարկուելու համար, բաւական է սենեակին մէջ վտանգ պահել քարիւղէ լամպար մը, քարիւղը այնչափ թունաւոր է այդ միջոցներուն որ վտանգէն յատալ եկած շողին կը բաւէ գանապան թմրեցունելու եւ անդամուծելու : Երբեմն կուզան այրուելու շիշին վրայ եւ կամ ընդունարանին քով կը մօտենան որ քիչ կամ շատ իւզի խաւով մը ծածկուած է, եթէ նոյնիակ իրենց թափելով դիզին այդ իւզոտ մակերեսին շանթահար կ'իջնան անմիջապէս :

Պ. Հէրիգուր կը մտածէ թէ մտեղով ապահանուած տեղերը մաքրելու համար կը բուռէ տարբեր հեւաւորութեանց վրայ քարիւղի վաւարաններ վառել, մէկ երկու դիշերէն բոլոր մտեղները կամ կը ստակին եւ կամ կ'անհետան այդ տեղերէն :

Թրգ. Վ. Տք. Օքս

ՊԱՐԶ ԽՕՍԲԵՐ

Տիւնկերքն անդամ չըջահայեացութեան վրայ հիմնուած է :

Ուրեմն բանաւոր արարածը՝ մարդը՝ չըջահայեացութեան խօսուն եւ անվերջ օրինակներու մէջ թաթաւուած է յոտից ց'գլուխ :

Ստեղծուածը՝ Ստեղծողէն, կամ ձեռակերտը բանուրէն աւելի գիտակ չկրնար ըլլալ . արդ երբ ստեղծողը չափն ու կշիռը կը յարգէ, ինքնաճանաչ ձեռակերտին պարտքն է անոնցմով սնանիլ :

Ժողովուրդն ըսած է « Լաւ է իմաստուն թշնամի, քան անիտ բարեկամ » : Իմաստունութիւնն ուրիշ բան չ'է բայց չըջահայեացութիւն, չափազանցութիւն, եւ անմտութիւնը՝ ասոնց հակոտնեայն :

Որովհետեւ խիզը կը մերժէ վնասելու ազատութեան գաղափարն իսկ, պէտք չ'է որ մամուլը ազատութիւնը վտանգէ անհատական ազատութիւնը, կամ վնասէ որ եւ է անձի մը . ըլլայ սա շնորհալու տրամադիր, կամ շնորհակարտ եւ կամ բարեխօս . . . :

Խիստ գիւրդին կ'ըլլայ թերթին սիւնակները լեցնել, եթէ չափն ու կշիռը, խոհականութիւնն ու արամբանութիւնը անյատակ վիհերու մէջ կը գահավիժենք . . .

Այս մտածումներն ունեցայ երբ 84 թուոյն մէջ « Նոր-Օր » իւ ՄՈՒՇԵՂ և ՆՇԱՆ» յօդուածը կարդայի :

Պ.

ՀՐԱՏԱՐԱՒՈՒԵՑԱԻ

Ազգային Սահմանադրութեան տեսլին չորրորդ Ըօրման :

Հինգերորդը պիտի հրատարակուի ու առաջիկայ հինգշաբթի :

ՅԵՏԱԶԳՈՒՄ

Կ'իմանանք թէ Դերասան Պ. Սմաւոթէրզեանի ի նպատ տրուելիք յառաջիկայ Մայիս 5 ի ներկայացումը, ինչ ինչ պատճառներով յետաձգուած է :

ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՄԷ

Առաջիկայ շաբաթ օր՝ « Արշալոյս » ի նոր աշխատակից « Դիտակ » ի — ԵՐԵՎԱՆԻ ՄԷ և կամ ՊԱՍԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ — որ Հայկական կեանքէ առնուած կարի հետաքրքրաշարժ տեսարաններ կը պարունակէ, իբր բանասիրական պիտի սկսինք հրատարակել :

« Դիտակ » ի գրութիւններն արդէն հայ ե օտար շատ մը թերթերէ գնահատուած են և իրենց մասնաւոր տեղը գրաւած . ուստի կ'արժէ որ այս քանի մը տողերով ընթերցողաց ու շաղթութիւնը հրաւիրենք անոր յօդուածներուն վրայ, զորս յետ այսու պարբերաբար պիտի զրկէ « ԱՐՇԱԼՈՅՍ » ին, մշտապէս իւ աշխատակցութիւնը անոր խօստացած լինելով :

ԴԱՀԻՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱՅԻՆ ԴԱՏԸ

Շէյխ Էթմանի Գալուտեան կալուածի մասին հետեւեալ գրութիւնը կը անտեսնէր Բիւրանդիոնի 1365 համար, 10 Ապրիլի թուոյն մէջ :

Երեկ թէ յօդուածագիրը՝ որ հաղիւ հալ իւր ստորագրութիւնը անսխալ դնելու կարողութիւնը ունի, Հոգեգալուտեան օր մը առաքեալներուն հետ Հոգեոյն սրբոյ շնորհքը ստացած է և կամ յօդուածէն առանց բան մը կարենալ հասկնալու իրեն ներկայացուած լինելուն համար ստորագրած է :

Ամենէն ստոյգը այս վերջինն է . հետեւաբար հարկ է որ իւն հասկցնենք թէ ինչ գրած է ին իրեն ստորագրած յօդուածին մէջ . . . :

ԴԱՀԻՂԻ, 2 Ապրիլ (ն. Տ.)

Ձեր Պատ . լրագրին տարւոյս Յվր. 30, 1316 թիւին մէջ հրատարակած էիք Գահրէէն ձեզ հաղորդուած տեղեկութիւններ ի մասին դատի մը, որ բացուած է Առաջնորդարանիս դէմ :

Ստոյգ է որ վարժարանի վերաբերեալ կալուածի մը երկամեայ (1899 Սեպտ. 10 - 1901 Սեպտ. 9) վարձատուութեան առթիւ դատ ծագած է վարձակալին ու Առաջնորդարանին միջև . վասն զի վարձակալը, փոխանակ երկուստեք կանխաւ գոյացած հումաճայնութեան համեմատ՝ Շէյխ Էթմանի Էպատիէին պարունակութիւնը նախորդ վարձակալէ կազմուած ցուցակին հետ բաղդատուելու եւ արդենքը Առաջնորդարանին հաղորդելու՝ պէտք եղածը անօրինակ համար՝ ամիսներով լրացած ու յետոյ 1900 Մարտի 3ին բնիկ գաւառանին տուելու դատ բացած է Առաջնորդարանի դէմ, պահանջելով վնասի հատուցում, գլխաւորաբար « արմաւենիները դէլ հատուելուն » եւ երկրորդաբար « անոնց մէջ պակասներ գանապան » պատճառաւ :

Վարչութեան Քաղաքական Ժողովը, որ մեր նախագահութեան տակ կ'գումարուէր այն ատեն, անմիջապէս խնդիրն օրէնսգէտներու չափութեան ներկայացուցած ու անոնց կարծիքին համեմատ, նկատելով թէ նոր վարձակալին ըսածին նայելով եթէ վնասին հեղինակը նախորդ ԵՍՏԱՆԱԿԱՍԱԿ վարձակալն է, բնիկ գաւառանէ արձակուելիք վճիւ մը չի կրնար այս վերջնոյն դէմ գործադրուիլ, հետեւաբար, խառն գաւառանի ստիպողական գործոց գաւառերին տուելու՝ Առաջնորդարանի վարձակալին փաստաբանին ձեռքով դատ բացած է 1900 Մարտ 14ին հին եւ նոր վարձակալներուն դէմ միանգամայն, քանի որ վնասին, եթէ իրօք գոյութիւն ունի, հեղինակն ու պատասխանատուն մէկը կամ միւսն է անպատճառ, եւ քանի որ ըստ սովորութեան, որուն Առաջնորդարանը կ'հետեւի, իրեն առաջին կալուածն ունենալէն

Հ Ն Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

ի վեր, Էպատիէն իր պարունակութեամբ հին վարձակալէն նորին փոխանցուած է ուղղակի Թիշեալ դատաւորն ընդունեց թէ այս գտոր պէտք է նախ հասնի դատարանի կողմէ վճարուի եւ մերժեց նոր վարձակալին պահանջը, որով կ'ուզէր այս գտաւն գուրս ձգուիլ: Ուրեմն, նոյն դատարանի 22 Մարտ 1900 թուական վճարարին համաձայն, նոր վարձակալը գտորին մէջ մնաց, եւ մասնագէտ մը կարգուեցաւ այս գործին քննութեան համար, որու անմիջապէս ձեռնարկուեցաւ: Այս պարագաներուն առջեւ աւելորդ դատուեցաւ օրէնսդիտաց կողմէ որ Առաջնորդարանն առժամայն ինքզինքը պաշտպանէ բնիկ նախնական դատարանին առջեւ, մինչեւ իսկ ներկայ գտնուի հոն, յուսալով որ մինչեւ այն ատեն հասնի դատարանն այս խնդրոյն ստուգութիւնն հաստատած կ'ըլլայ քննութեամբ:

Բնիկ դատարանն հետեւաբար հիմնուելով իր կողմէ Առաջնորդարանի խնայակալութեան կատարել տրուած քննութեան մը տեղեկագրին վրայ, 1900 Յունիս 2ին դատապարտեց Առաջնորդարանը նոր վարձակալին պահանջած իբր 640 երկուս. սակեայ գումարը վճարելու, հիմ բռնելով իւրաքանչիւր ծառի համար 13 դր. ողջ մնաւ, իբր հետեւանք գէշ հօտուելուն եւն: Առաջնորդարանն այս վճիռն օրոգիսիտի առարկայ ըրաւ Յունիս 30ին միեւնոյն, այսինքն բնիկ դատարանի առջեւ, պահանջելով որ դատարանն ուշադրութիւն դարձնէ ի'նչ ի'նչ կարեւոր նկատուեմներու վրայ, մերժէ վարձակալին պահանջն իբրև անիրաւ, կամ գոնէ յետագէ անոր քննութիւնը, մինչեւ որ հասնի Դատարանն իր վճիռն արտասանէ, Առաջնորդարանիս կողմէ միեւնոյն երէքին համար յիշեալ վարձակալին եւ անոր նախորդին դէմ խնայուած դատարանի մէջ: Բնիկ նախնական դատարանը սակայն դիտողութիւն ընելով թէ նոր վարձակալն ուղղակի Առաջնորդարանէն վարձած է կալուածը, 17 Նոյմ. 1900 ին վերահաստատեց իր արդէն տուած վճիռը, որ Առաջնորդարանիս կողմէ բնիկ վերաքննիչ դատարանին առջեւ հանուեցաւ, եւ մեծ յոյս կայ թէ այս բնիկ դատարանը գոհացում տայ Առաջնորդարանի պահանջումին, երբ ամսոյս 24 ին զբաղի այս գտորով:

Հասնի Դատարանի ստիպողական գործոց դատաւորին կողմէ կարգուած քննիչին գործը թէև պահ մը ընդհատուեցաւ՝ քննիչին ծանր ու երկարատեւ հիւանդութեան պատճառաւ, բայց ուր ուրեմն աւարտեցաւ այս օրերս, եւ անցեալ ամսոյ 26 ին (Ն. Տ.) տեղեկագրուեցաւ նոյն դատաւորին եւ ի մօտոյ Սասնի Դատարանի ուշադրութեան պիտի մատուցուի: Նոյն տեղեկագրէն կը տեսնուի թէ քննութիւնը կատարուած է տեղւոյն վրայ եւ շատ մանրակրկիտ կերպով, թէ նոր վարձակալը ներկայանալով ինքնին սակեայ ջանքի գործ դրած է ինքզինքն արդարացուեցաւ համար, թէ արեւելիկները գէշ եւ շատ սարիւնէր պատշաճ կերպով հօտուած ըլլալու անբաւարարութեան ակնհայտ եւ արմատականները նոր վարձակալին պայմանագրին մէջ նշանակուած թիւէն, այսինքն 4780 էն 285 հաս պահուս եւ, որու 235 ին պատասխանատուութիւնը կ'ընտանայ հին վարձակալին վրայ եւ անցեալ 50 հասինը կարելի եղած չէ իրեն ճշդիլ թէ որո՞ւ կ'պատկանի, նոր վարձակալին թէ հիմնին: Արդ, ենթադրելով որ այս 50 ին համար նոր վարձակալին պատասխանատուութիւնը չհաստատուի, ենթադրելով որ պակաս 285 ծառին բերքին համար նոր վարձակալն Առաջնորդարանէն տուածք առնելու իրաւունք ունենայ, ծառ գլուխ 13 դրուչի հաշուով իսկ, չի կրնար աւելի ըլլալ քան 3705, եւ ոչ թէ ասոր գրեթէ քան պատշաճ գումար մը 64000 որոշը:

Կ'աւելցնենք նաեւ որ սխալ է թէ բնիկ դատարանի քննիչներու իբրև արբ. վարձք 200 ոսկի սահմանուած է. այլ այդ գումարէն ճիշտ տասն անգամ նուազ:

Կար եւ յաջողութիւն մաղթելով ձեզ, եւ ողջունելով զձեզ հայրական սիրով:

Մ'նամ աղօթարար  
Առաջն. նախորդ Տեղապահ  
Հայոց Եզրագրի  
ՄԱՄԱՐԷՒ ՔԶԹ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բէքին 28 ապրիլ. — Բաթմինիֆուրի գերմանացիները մեծ կուր մը մղած են ամսոյս 23 ին՝ մեծ պարիսպին մօտը, կրկին վճարած են Չինացիները Շահախի մէջ շատ մը մարդիկ սպանելէ յետոյ: Գերմանները կորուսած են 4 հոգի. գրաւած են 4 դրոշակ եւ 4 թիղանօթ: Փրանսացիները իրենց ստացած հրամանին համեմատ զգուշացած են կուրին մասնակցելէ:

Լոնտոն 28 Ապրիլ. — Ֆիլիպեանց ապստամբապետ Սանտիկո, իբր երիցագոյնը եւ ամենահինը ապստամբապետներուն Ակիւնալտոի գերեզմարութիւնէն յետոյ, հրաւիրած է ապստամբական խումբերու պետերը յաջորդ սպարապետ մը ընտրելու համար:

Լոնտոն 29 ապրիլ. — 25 գաղթավայրի զօրքեր յանկարծակիի եկած են Բրոնշթատէն 15 մղոն անդին 400 Պօէրներէ: 8 ժամու չափ ինքզինքնին պաշտպանած են 14 մեռեալ եւ բազմաթիւ վիրաւորեալ ունենալով. եւ այն ժամանակ անձնատուր եղած են երբ ուղղամթերքները հասած են:

Կ. Պօլիս 29 ապրիլ. — Զօրավար Նէճիպ բաշա որ Եթիւնը զրկուած էր, կը ծանուցանէ թէ ապստամբութիւնը անկարեոր բան մ'է եւ քիչ ժամանակէն պիտի խեղդուի: Սակայն եւ այնպէս բաւական թընով օգնազօրք ալ խնդրած է, որ անմիջապէս զրկուած է:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առաջիկայ շաբաթ օր, 4 մայիս երեկոյեան ժամը 8-10 1/2, ՍՈՒՃՐՄ ՆՕՄԻ փառայեղ սրահին մէջ տեղի պիտի ունենայ ինպատ հայ Աւետարանական դպրոցին տրուելիք հանդէսը, որուն ներկայ եղողները պիտի կրնան ունկնդրել զաշնակի, ջութակի եւ երգեհոնի վրայ ընտիր կտորներու՝ երգերով հանդերձ:

Անգղիացի նշանաւոր Տիկին մը՝ անձնուիրաբար յանձն առած է մեներգներով (solo) մասնակցել հանդիսին:

Նոյնպէս անգղիացի պարոն մը ստանձնած է որովայնախօսութիւններով կարի հետաքրքրաշարժ եւ շահեկան ընել երեկոյթը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԷ

— Մեծն Բրիտանիա իւր քաղաքներու փողոցները նորոգելու համար ամեն տարի մէկ միլիոն եօթը հարիւր յիսուն հազար ոսկի կը ծախսէ:

— Դիպուածներէ զնասուած ամեն մէկ 1180 հոգիէն՝ 317 ը կիներ են, իսկ 237 ը աղւ. քններ:

— Աշխարհիս բամբակի տարեկան արտադրութիւնն է տասնեւերեք միլիոն թօնօ, որուն ինք միլիոնը կ'արտադրէ Ամերիկա՝ եւ երկուք ու կէսը Հնդկաստան իսկ մնացեալը Եգիպտոս եւ այլուր:

— Հիւսիսային Ամերիկայի երկաթուղիի գիծերու տարածութիւնն է երկու հարիւր ինը հազար հինգ հարիւր յիսուն եւ վեց մղոն՝ իսկ ամբողջ եւրոպայինը 163,413 մղոն:

— Լոնտոնի մէջ կան 336 հասարակաց զբօսավայրեր՝ որոնց նստարանները կրնան պարունակել 400,000 հոգի:

— Անգլիոյ եւ Կալիֆօնի մէջ կան 40000 ձկնորսներ եւ ունին 7371 նաւակներ. ասոնք կը բռնեն տարեկան գրեթէ եօթը միլիոն օխայ ձուկ:

— Ամերիկեան երկաթուղիներն իրենց ճամբորդներուն կ'արտօնեն 150 լիպրա բռտանելու հետերին. ֆրանսականներն 66 լիպրա՝ իսկ գերմանական եւ ուսական երկաթուղիներն 55 լիպրա միայն:

— Անցեալ դարու մէջ Մեծն Բրիտանիայէն եւ Իրլանտայէն գաղթած են ինը միլիոն ութը հարիւր վաթսուն հազար մարդիկ: Գերմանիայէն հինգ միլիոն վեց հարիւր եօթանասուն հազար, իսկ Իտալիայէն երեք միլիոն հինգ հարիւր ութսուն հազար հոգի:

— Պրանգ եւ Գերման պատերազմէն՝ 1871 էն ի վեր Գերմանիոյ ժողովուրդը 41 միլիոնէն 56 միլիոնի բարձրացած է:

— Ընդժողկայ հեռագրաթերերու համար Գաղղիա ամեն տարի Անգլիոյ կը վրձարէ երկու միլիոն հինգ հարիւր հազար ֆրանկ:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ. — Հարուստ կալուածատէր մը Պ. Բիկան, Բանսասի մարգագետիններու մէջ քառասունակ արչաւելով դժնդակ օր մը անցնելէ յետոյ՝ փրկափայտար սիկարէթ մը սկսաւ ծխել, ծխավաճառէ մը գնուած տուփ մը հանելով գրպանէն: Պարագ տուփը նետելու ատեն մէջը հիանալի լուսանկար մը գտաւ: Անունը Միսս-էլլա Ս... էր, կը մնար գտնալ կենդանագրին անձը: Հետաքրքրութենէ մղուած Պ. Բիկան այդ հասցէին հետքին հետեւեցաւ եւ կարողացաւ Օր. Ս... ն գտնել որ թ... ի մէջ ծխավաճառուհի էր: Նմանութիւնը կատարեալ էր, լուսանկարը չափազանցուած չէր: Ի'նչ կրնէ մեր Պ. Բիկանը պարզապէս, կամուսնանայ օր Ս... ի հետ: Այդ անձանօթ օրորողը հեռաւոր գիւղի մը մէջ կզգիացած, ուրիշ միջոց ունեցած չէր, այլ միայն լուսանկարը եւ հասցէն սահեցնելով մէկ քանի տուփերու մէջ գործը բաղդին յանձնած էր, վստահ թէ նա չպիտի ուշանար իրեն արևորիկ ամուսին մը ճարելու: մեր Պ. Բաղդին ալ, ինչպէս որ կը տեսնենք, չուշանար օրորողին դուռը զարնելու:

Ն ՈՐ Հ Ա Ն Դ Է Ս Մ Ը

Հետեւեալ սպորտարութիւնը ստացած ենք Փարիզէն:

1901 Յունիս 1-ից Պարիզում կ'սկսի լոյս տեսնել հայերէն լիգուով

«ԺԱՄԱՆԱԿ»

ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ,

ԺԱՄԱՆԱԿը կուսնայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին եւրոպական գրական հանդէսները: առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու զեղարուեստական բաժիններին վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատրաստակա՞նութիւն են յայտնել բազմաթիւ հոյ եւ եւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց կրկին արդէն ստացել է նմաբարութիւնը:

ԺԱՄԱՆԱԿը բաղկացած կըլինի 5 սպաղարու:

կան թերթերից (80 երես La Revue et Revue des Revues հանդիսի գիրքով)

ԺԱՄԱՆԱԿԻ առաջին հարմարը լոյս կտեսնի ճիշտ 1901 թուականի յուլիս 1-ին եւ ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յուլիս 1, սեպտեմբեր 1, ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ եւ կը տպագրէ եւրոպական երկերի բնագիրը եւրոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին:

Բացում է բաժանորդագրութիւն 1901 եւ 1902 թուականներին: Բաժանորդութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ

Բաժանորդագրութիւն 1901 թուականի (կիսամեակ)
Ռուսաստան . . . . . 3 ուրբլի
Անգղիա . . . . . 7 շիլինգ
Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա . . . . . 8 ֆրանք
Ամերիկա . . . . . 1 դոլար (սակի)

Բաժանորդագրութիւն 1902 թուականի (12 զիւր)
Ռուսաստան . . . . . 10 ուրբլի
Անգղիա . . . . . 1 ֆնա. ստերլին
Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա . . . . . 25 ֆրանք
Ամերիկա 1 դոլար (սակի) 5 դոլար

Բաժանորդագրութիւն 1901 եւ 1902 թուականների համար (15 զիւրք)
Ռուսիա . . . . . 12 ուրբլի
Անգղիա . . . . . 1 ֆնա. ստերլ. եւ 7 շիլինգ
Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա . . . . . 30 ֆրանք
Ամերիկա . . . . . 6 դոլար:

Ամենայն տեղերից գրեմէ հետեւեալ հասցեով.
— Paris, (France) 64 rue Claude-Bernard
Directeur de la Revue «JAMANAK»

S. HAKHOUMIAN

ԺԱՄԱՆԱԿԻ առաջին համարը կուզարկուի միայն այն բաժանորդներին, որոնք կ'ստորագրուին մինչեւ ներկայ թուականի յունիս 10ը (ն. ա): Այդ թուականից յետոյ ստորագրուողներին խմբագրութիւնս չէ խոստանում 1 No ը, որ պիտի տպագրուի, այն քանակութեամբ, ինչ քանակութեամբ ստորագրուողներ լինին մինչեւ յունիսի 10ը (ն. ա):

Ժամանակի 1 հարմարը Պարիզի փոստին կը յանձնուի ճիշտ Յուլիսի 1-ին (ն. ա):

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Հեղինակութիւն — ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆԻ
ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ


Բաւական ժամանակէ ի վեր տպագրութիւնը թէեւ աւարտած էր, սակայն ինչ ինչ պատճառներով հեղինակին կողմանէ վաճառման տեղը որոշուած չ'ըլլալով ծանուցումը յապաղեցինք. ուստի տպագրական պարտաւորութիւն կը համարինք այժմ ծանուցանել անոր աւարտումը այն ընթերցասէր ազգայնոց, որոնք կը սիրեն ազգու հայրենիք, եւ անոնց վերաբերեալ սրբտագրու ողբերգութիւն մը:

Սոյն երկասիրութիւնէն զնեւ փափաքողը կրնան դիմել Հեղինակին, որ ամեն օր կէս օրէ վերջ ժամը 3 — 5 «Արշալոյս» թմբագրատունը կը գտնուի:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ:

ՏՆԻ ՄԻՉՈՒԱ ԼԱՅՅ
ԿԵՆԱՑ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՏԱՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ
Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ
որ գրեթէ այլապէս ուրիշ սրէ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկա.
յաջոյցիչ ի Գ. ՀԷՐԷ
ԳՈՐԾԱԿԱԼ Ի ՄՈՒՍԿԻ
— ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆՅԻՐ
Պալարի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիմօլ Սթրէշի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:
Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ
Այլապէս ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներքին եւ արտաքին մինչեւ ցար. 17,000,000 ծախուած է:
400 Ե աւելի վիտայիսններով եւ մեքայիներով վարձատրուած, երաշխաւորուող մեքենաներ,
ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիւրքիական արտեսականիսիին մէջ ստացած է:
ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՐԸ
ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳՄԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍԱԾ
ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ Ն. Բ. ԱՅԻՎԱԿԱՆ ԶԱՆ
Չոր ցատկը եւ նորագոյն թիւները, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տաններուն մէջ:
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորագոյն թիւն ամեն կաշի Մեքենայից
ԳԻՆ ԶԱՓԱՌՈՒՐ



ՀՐԷՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆ ԿԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 28 ԱՊՐԻԼ 1901

Table with 6 columns of numbers: 7253, 2621, 6213, 2164, 420, 1112; 1113, 1234, 2715, 2816, 3229, 3396; 3482, 3725, 3823, 3886, 4605, 4949; 5870, 6231, 6585, 7048, 7160, 7299; 7332, 7580, 7814, 8265, 8266, 8887

ՀՆԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 28 ԱՊՐԻԼ 1901

Table with 6 columns of numbers: 3450, 424, 3580, 5411, 2086, 4981; 2659, 5469, 9573, 2164, 6966, 1219; 6045, 2867, 2174, 1846, 9844, 7525; 1017, 8072, 8319, 7865, 7167, 747; 8058, 4196, 3794

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂՔԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻՎ ԱՊՏԻԼ ԱՅԻՁԻ ՍԿԶԲԸ
Օսկանիչե դեղարանին դիւանցի փողոցին մէջ.
Ժողովրդական Տպագրանի մէջ կը պատրաստուին:
Այցեխարտեր, Երջաքերակներ, Գիւլեր, Հրախրագրեր, մասնադրներ, Տեղեկագրներ, Կանոնագրեր, Տոմարներ եւ այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն:
1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. Ե. Բ. պրակներն:
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ թուրքիա մուտքը, ինչպէս կը լինի, արդիւրեւ է:
3. ՀԱՒԱՔԱԾՈՑ հայոց ժողովրդական երգերը: